# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու N38 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի զինղեկի (1,0 դրույք) պաշտոնի թափուր տեղի համար:

Զինղեկի թափուր տեղի համար նախատեսված վարձատրությունը սահմանվում է ըստ հաստքացուցակով նախատեսված դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն (Ձև 5)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Մրցույթին մասնակցողը պարտադիր պետք է ունենա պահեստազորի սպայի կոչում և տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հրապարակման օրվանից՝ 2026թ-ի մարտի 30-ից, մինչև 2026թ. ապրիլի 13-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Զինղեկի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթը տեղի կունենա 2026թ. ապրիլի 17-ին ժամը՝ $14^{00}$-ին Շիրակի մարզի <<Գյումրու N38 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Գյումրի Բուլվարային 7:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093201732